ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 4
№ ՇՀԱՊՁԲ-7/5-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 13. 02. 2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և "Արարատ" Սննդի Կոմբինատ ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ս. Թարվերդյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 09.03.2016թ. կնքված № ՇՀԱՊՁԲ-7/5-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.2 և 9.2 կետերը և այն փաստը, որ "Արարատ" Սննդի Կոմբինատ ՍՊԸ-ն համաձայնվել է «տոմատի մածուկ /Տոմատի մածուկ/» ապրանքատեսակի առաջարկված միավորի գինը նվազեցնել, սահմանելով՝ 678.2 փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի սննդամթերք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. **Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **29 497 630.8 (քսանինը միլիոն չորս հարյուր իննսունյոթ հազար վեց հարյուր երեսուն ամբողջ ութսուն) ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ.:

3. **Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

4. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ք. Երևան, Բագրևանդի 5 | «Արարատ» Սննդի Կոմբինատ ՍՊԸ |
| ՀՀ ֆինանսների նախարարության | ք. Երևան, Արաբկիրի 29 փ, տ. 13/1 |
| աշխատակազմի գործառնական վարչություն | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011140079 | Հ/Հ 1570012093430100 |
| ՀՎՀՀ 00867415 | ՀՎՀՀ 05523921 |
| ՀՀ պաշտպանության նախարարության | տնօրեն |
| ՆՏԱ դեպարտամենտի պետ ՊԺԿ | |
| Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | Ս. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ |

00650896

Հավելված N 1
№ ՇՀԱՊՁԲ-7/5-1 գնման պայմանագրի N 4 համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Գնման առարկան | Չ/մ | Քանակ | Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր Գումարը /ՀՀ դրամ/ | Ապրանքների մատակարարումը ըստ ամիսների 2018թ. | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր |
| 1 | տոմատի մածուկ /Տոմատի մածուկ/ | կգ | 43494 | 678.2 | 29497630.8 | 4800 | 4800 | 4800 | 4800 | 4800 | 4800 | 4800 | 4800 | 5094 |
| Ընդամենը | 29 497 630.8 (քսանինը միլիոն չորս հարյուր իննսունյոթ հազար վեց հարյուր երեսուն ամբողջ ութսուն) ՀՀ դրամ | | | | | | | | | | | | | |

Հավելված N 2
№ ՇՀԱՊՁԲ-7/5-1 գնման պայմանագրի N 4 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Գնման առարկան | CPV-ի կոդը | *Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | տոմատի մածուկ /Տոմատի մածուկ/ | 15333100/1/10/3 | 3255360 | 6510720 | 9766080 | 13021440 | 16276800 | 19532160 | 22787520 | 26042880 | 29497630.8 | 29497630.8 | 29497630.8 |

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ վարչության պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Արարատ» Սննդի Կոմբինատ ՍՊԸ
ք. Երևան, Արաբկիրի 29 փ, տ. 13/1
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570012093430100
ՀՎՀՀ 05523921
տնօրեն

Ս. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

0065089 64